ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10. 1954 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ[1]

Պավլիկյան շարժումը վաղուց ի վեր գրավել է պատմագրության ուշադրությունը, նրա մասին գրվել են մի շարք ուսումնասիրություններ։ Սակայն բուրժուական պատմագիտությունը չկարողացավ խորամուխ լինել այդ շարժման բուն էության մեջ, այլ սահմանափակվեց միայն դաժման աղբյուրների, գավանաբանական հայացքների ու ժամանակագրական հարցերի քննությամբ։ Միայն սովետական պատմագիտության ջանքերով հնարավոր եղավ ի հայտ բերել պավլիկյան շարժման սոցիալական էությունը և քննարկել այն որպես միջնադարյան դյուղացիական տուժող ապստամբություններից մեկը։

Ընկ. Ս. Մելիք-Բախշյանը առաջինն է սովետահայ պատմաբաններից, որ պավլիկյանների շարժմանը նվիրում է հատուկ մենագրական ուսումնասիրություն։ Ավելորդ է շեշտել, որ այս առումով քննարկվող աշխատությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում։

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, ներածությունից և տինդ գլուխներից։ Վերջում տրված է ուսումերեն ամփոփում, օգտագործված գրականության ցանկ, հատուկ անունների ցանկ և Հայաստանի 5—9-րդ դարերի սոցիալական շարժումների քարտեզ։

Ներածության մեջ, հեղինակը ելնելով Ֆ. Էնգելսի հայտնի գրքերից, որ Միջնադարում ֆեոդալիզմի դեմ ուղղված գրեթե բոլոր շարժումները արտաքինից ընդունում էին կրոնական դպեսավորում, դասելով ազանդավորական շարժումներ (էջ 10—11), անցնում է պավլիկյան շարժման վերաբերյալ հայերեն սկզբնաղբյուրների քննարկմանը։ Նա հիշատակում է ամենահին աղբյուրը՝ «Ուխտ միաբանութեան հայոց աշխարհիս», ապա Հովհան Օձնեցու «Ընդդէմ պաւղիկեանց» աշխատությունը, Գրիգոր Մագիստրոսի «Առ կաթողիկոսն Ասորւոց» թուղթը, եկեղեցական որոշ կանոններ և մի շարք մատենագրական այլ նյութեր։

Ընկ. Մելիք-Բախշյանը այնուհետև անցնում է բյուզանդական աղբյուրների քննարկմանը։ Ինչպես հայտնի է, պավլիկյան շարժման ծագման և հետագա պատմության հիմնական սկզբնաղբյուրները հետևյալներն են. «Պետրոս Սիկիլիացու օգտակար պատմություն, քննագատություն և եղծում մանիքեցիների ազանդի, որոնք և պավլիկյաններ են կոչվում, շարադրված Բուլգարիայի արքեպիսկոպոսի համար»[2], ապա պատրիարք Փոտին վերագրված «Մանիքեցիների վերածման մասին» աշխատությունը[3] և ոմն Պետրոս Հեղումենոսի հատվածը պավլիկյանների մասին[4], որն ամբողջությամբ մտել է Գեորգիոս վանականի ժամանակագրության մեջ։

Այս աղբյուրների՝ միմյանց հետ ունեցած կապի հարցը պրոֆեսոր է դրել բոլոր ուսումնասիրողներին, սակայն մինչև այժմ էլ պարզ չէ, թե որն է դրանցից մյուսների համար սկզբնաղբյուրի դեր կատարել։ Թվում է, որ Ստ. Մելիք-Բախշյանը պետք է կանգ առներ այդ հարցի վրա, և եթե նույնիսկ չկարողանար լուծել, պետք է ծանոթացներ ընթերցողներին այս կարևոր հարցի մասին եղած հիմնական տեսակետների հետ։ Հեղինակը, սակայն, առանց քննության առնելու այդ հարցը, այն կարծիքն է հայտնում, որ Պետրոս Սիկիլիացու աշխատությունը սկզբնաղբյուր է ծառայել Փոտին և Պետրոս Հեղումենոսին։

---

[1] Ստ. Մելիք-Բախշյան, *Պավլիկյան շարժումը Հայաստանում, Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի հրատարակություն, Երևան, 1953։*

[2] *Petri Siculi*, Historia Manichaeorum seu Paulicianorum, ed. Gieseler-Gottingen. 1846, *նաև* Migne—Patrologia graeca, t. CIV, Col. 1240—1304.

[3] *Migne*, Patr. graeca, t. CII, Col. 16—81.

[4] Appendix ad Petri Siculi Historiam. ed. Gieseler, Göttingen. 1849.

[5] *Georgii Monachi*, Chronicon, ed. C. de B. Boor, Lipsiae, 1904, Vol. II, pp. 718—725.

Համարելով Պետրոս Սիկիլիացուն հիմնական սկզբնաղբյուր, հեղինակը, այնուամենայնիվ, բուն տեքստում հաճախ վկայակոչում է 12-րդ դարի հեղինակներ՝ Կեդրենոսին և Զոնարասին, որոնք հլու հետևում են վերը նշված աղբյուրներին կամ Թեոֆանեսի ժամանակագրությանը (9-րդ դար)։ Հեղինակը թվարկում է պավլիկյան շարժման պատմության այլ աղբյուրներ ևս՝ Գենեսիոսի պատմական երգը (10-րդ դար), պայմանական կերպով «Թեոֆանեսի շարունակող» կամ «Շարունակված Թեոֆանես» անվանված 10-րդ դարի ժողովածուն։ (Այստեղ հարկավոր է հիշատակել, որ այդ ժողովածուի 5-րդ գիրքը, որը պարունակում էր պավլիկյանների մասին շատ տեղեկություններ, գրել է կայսր Կոնստանդին Ծիրանածինը)։ Ապա նա հիշում է Աննա Կոմնենայի «Ալեքսիադան», Զիգաբենոսի (Զիգաբենոսի) դավանաբանական ընույթի աշխատությունը, Զոնարասի, Կեդրենոսի, Գյուկասի և Նիկիտա Խոնիատեսի գրվածքները և ի վերջո կարդինալ Բարոնիոսի 16-րդ դարի վերջում գրած «Եկեղեցական տարեգրությունները»։

Պետք է ասել, որ պավլիկյանների մասին վերջինիս ունեցած տեղեկությունները օգտագործելու պրիորիտետը լիովին պատկանում է գրքի հեղինակին, նրանից առաջ և ոչ մի ուսումնասիրողի ուշադրությունը չի գրավել Բարոնիոսի աշխատությունը։ Բարոնիոսը իր բազմահատոր աշխատության մեջ պավլիկյաններին նվիրված հատվածն արտագրել է Պետրոս Սիկիլիացուց և ուրիշ հեղինակներից։ Այդ հանգամանքը ընդունում է և ինքը Ս. Մելիք-Բախշյանը (էջ 161, 163 և այլն), և միայն մի տեղ գտնում է, որ Բարոնիոսը անկախ է մյուս աղբյուրներից։ Խոսքը վերաբերում է այն վկայությանը, որտեղ Բարոնիոսը խոսում է պավլիկյանության Պիսիդիայի Անտիոք քաղաքում տարածված լինելու մասին։ Սակայն, անտարակույս, այդ տեղեկությունը ևս Բարոնիոսը վերցրել է Պետրոս Սիկիլիացուց[1]։

Բարոնիոսի կողմից օգտագործված բոլոր աղբյուրները պավլիկյանների մասին (Պետրոս Սիկիլիացի, Թեոֆանես) հասել են մեզ բնագրերով, ուստի անիմաստ է այն դիտել որպես նոր աղբյուր[2]։

Աղբյուրների կոնկրետ քննադատության, նրանց պատմագրական արժեքի վերհանման փոխարեն հեղինակը բավարարվում է ոչինչ չասող ընդհանուր հայտարարություններով։ Ուստ որում մեզ հայտնի է դառնում, որ «բավականին արժեքավոր է» Հովնան Օձնեցու աշխատությունը (էջ 15), «բավականին արժեքավոր տեղեկություններ կան բյուզանդական սկզբնաղբյուրներում» (էջ 10), «բավականին հմուտ» պատմիչ է Զոնարասը (էջ 21), «բավականաչափ տեղեկություններ» է պահպանել Կեդրենոսը (էջ 22), «Գյուկասը բավական արժեքավոր տեղեկություններ է տալիս» հերձվածողների դաղափարախոսության մասին (էջ 22) և այլն։

Նկատելի թերություններ կան նաև գրականության տեսությանը նվիրված ենթագլխում։ Հեղինակը մանրամասն խոսում է մի շարք հնացած գրքերի մասին, ինչպիսիք են, օրինակ, Լևիցկու կամ Զելցովի հոդվածները, անդրադառնում է Լոմբարդի վերին աստիճանի մակերեսային գրքին և ոչ մի գրական կամ քննադատական խոսք չի ասում ժամանակակից սովետական մարքսիստ ուսումնասիրողների մասին։ Հարևանցիորեն միայն նշված է, որ «հատկապես ուսանելի են Ա. Վասիլևի, Ե. Լիպշիցի, Մ. Լևչենկոյի արած դիտողություններն ու մեկնաբանությունները» (էջ 25)։ Եվ այս այն ժամանակ, երբ Ե. Լիպշիցը իր մի շարք լուրջ ու մեծարժեք հոդվածներով մեծապես նպաստել է պավլիկյան շարժման էտապների ու դաղափարախոսության ուսումնասիրման գործին։ Գրականության ցանկի մեջ նշված է Ե. Լիպշիցի մի աշխատություն[3] միայն, իսկ նույն հեղինակի մի այլ աշխատությունը վրիպել է Ստ. Մելիք-Բախշյանի ուշադրությունից[4]։ Նույնը կարելի

[1] Տես *Petri Siculi*, Apud Migne, Col. 1285.

[2] Բարոնիոսի տարեգրությունները մինչև այժմ չեն կորցրել իրենց նշանակությունը, քանի որ նրա օգտագործած աղբյուրների մի մասը մեզ չի հասել։ Սակայն այդ չի տարածվում նրա աշխատության այն հատվածների վրա, որոնք նվիրված են պավլիկյան շարժմանը։

[3] *Е. Э Липшиц*, Павликианское движение в Византии в VIII в. и первой половине IX века, Византийский Временник, V, 1952.

[4] *Е. Э. Липшиц*, Вопросы павликианского движения в освещении современной буржуазной историографии, Виз. Вр., V, 1952; Նույն հեղինակն ունի մի ուրիշ աշխատություն ևս, որտեղ նույնպես անդրադառնում է պավլիկյան շարժման պատմությանը. տես „Никифор и его исторический труд", Виз. Вр., III, 1950.

է ասել նաև Լ. Խաչիկյանի գրքի մասին՝ նվիրված IV-րդ դարի սոցիալական շարժումների պատմությանը[1]։

Անհասկանալի կերպով գրականության տեսության բաժնում սովետական մարքսիստ պատմաբանների թվում հիշատակվում է բուրժուական պատմաբան սպիտակ-էմիգրանտ Ա. Վասիլևը (էջ 25)[2]։

Առաջին գլխում, որը վերնագրված է «Պավլիկյան շարժման նախորդները Հայաստանում», բնկ. Մելիք-Բախշյանը խոսում է մանիքեության և նրա տարածման մասին Հայաստանում, ապա շարադրում է բորբորիտների և մծղնյաների շարժումների մասին հայտնի տվյալները։ Հեղինակը փորձում է ապացուցել, որ մանիքեությունը լայն տարածում էր գտել Հայաստանում, սակայն այդ թեզը հաստատելու համար սկզբնաղբյուրներից չի բերում անհրաժեշտ փաստեր։

Պավլիկյանության և մանիքեության նմանությունը միմիայն երկուսին հատուկ դուալիզմի մեջ էր, սակայն մանիքեական դուալիզմն ուներ զուտ կոսմոգոնիկ իմաստ, իսկ պավլիկյանները դնում էին նրա մեջ սոցիալական խորը բովանդակություն։ Ուստի և կարիք չկար այդքան տեղ նվիրել մանիքեությանը, մանավանդ, որ հեղինակը փորձեր չի կատարում մանիքեության սոցիալ-տնտեսական արմատները պարզելու ուղղությամբ։

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությանը 6—9-րդ դդ.։ Հեղինակը ցույց է տալիս հայ գյուղացիության ծանր վիճակը, որը առավել ևս ծանրանում էր օտարերկրյա դավթիչների արշավանքներից ու տիրապետությունից։ Հեղինակը տալիս է ոչ միայն արևելյան, այլև արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատկերը, իրավացիորեն պնդելով, որ վերջինս «լինելով բյուզանդական կայսրության բաղկացուցիչ մասը, յուրացրել էր Բյուզանդիային հատուկ սոցիալ-տնտեսական հարաբերությունների հատկանիշներ» (էջ 98)։

Նույն գլխի «Եկեղեցին որպես ֆեոդալական կազմակերպություն հին Հայաստանում»[3] ենթագլխում հեղինակը փաստեր է բերում ցույց տալու համար, որ եկեղեցին իր հերթին հանդիսանում էր աշխատավոր խավերին շահագործող մի կազմակերպություն։ Այդ նպատակին հեղինակը հասնում է, սակայն մեջ բերված փաստերից շատերը վերաբերում են կամ 4—5-րդ դարերին և կամ ներկայացնում են պավլիկյան շարժման ճնշումից հարյուրամյակներ հետո ձևավորված հարաբերություններն ու վիճակը։ Հեղինակը հնարավոր է համարել հավասար չափով հենվել ինչպես Փավստոս Բյուզանդի (5-րդ դ.), այնպես էլ Մատթեոս Ուռհայեցու ու Մխիթար Գոշի (12-րդ դ.) տվյալների վրա։ Այսպիսով, ընդհանուր առմամբ ճիշտ ընութագրելով հայ եկեղեցու կազմակերպության ֆեոդալական էությունը, հեղինակը չի կարողացել բացահայտել այն ընորոշը, որ հատուկ էր հայ ինչպես և բյուզանդական եկեղեցուն պավլիկյան շարժման ժամանակաշրջանում։

Այժմ տեսնենք, թե սոցիալ-տնտեսական այդ ֆոնի վրա հեղինակը ինչպես է ներկայացնում պավլիկյան շարժումը։

Պավլիկյաններին հիշատակող հնագույն աղբյուրը հեղինակը համարում է «Ուխտ միարանության հայոց աշխարհիս» հայտնի վավերագիրը, որը 1900 թ. հրատարակեց Կ. Տեր-Մկրտչյանը[4]։ Այդ փաստաթուղթը, որը Դվինի 544 թ. եկեղեցական ժողովի բանաձևն է, նպատակ է ենթարկում Հայաստան եկած նեստորականներին, որոնք ի միջի այլոց հաղորդություն էին ընդունում «որպէս յուխտէ նուիրաց պաւղիկեանաց»[5]։

Ընդունելով այս հիշատակության տարեթիվը՝ 554, հեղինակը ենթադրում է, որ պավլիկյան ուսմունքը «պետք է որ Հայաստանում գոյություն ունեցած լիներ ավելի վաղ, գոնե ամենաուշը 6-րդ դարի սկզբից» (էջ 132)։ Ինչպես հայտնի է, Հովհան Օձնեցին պավլիկյանների մասին գրելիս նրանց անվանում է «նախկին մծղնեութեան պայդակենու-

---

[1] Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դ.), Երևան, 1951։

[2] Ի դեպ ասած, հեղինակին անծանոթ մնացել է Ա. Վասիլևի մյուս գիրքը. „Византия и арабы. Политические отношения Византии и арабов за время Македонской династии", СПБ, 1902, որտեղ նա մեծ տեղ է նվիրում պավլիկյան շարժման վերջին էտապին։

[3] Ճիշտ կլիներ, իհարկե, գրել «Միջնադարյան Հայաստանում»։

[4] Պավղիկեանց և Թոնդրակեցւոց աղանդները արդի բննադատութեամբ, «Արարատ», 1900, հուլիս։

«Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 73։

թեան խեշերանքն»: Վիրավորական «պայդակենությանն» բառը Օձնեցին օգտագործում է, քանի որ նա մոտ է «պավլիկյանություն» բառին: Հիմք ընդունելով այդ, ընկ. Ստ. Մելիք-Բախշյանը գտնում է, որ եթե ընդունենք «պայդակենություն», «պայդակեն» «պավլիկյան» անվան կապը մծղնեության հետ, ապա «պավլիկյանության գոյության ժամանակը է՛լ ավելի է հեռանում մեզանից և հասնում է մինչև 5-րդ դարը, այսինքն՝ դառնում է մծղնեության ժամանակակիցը և, հավանաբար, այդ շարժման շարունակությունը» (էջ 130):

Այս ենթադրությունը, սակայն, հեղինակը չի կարողացել հիմնավորել որևէ կոնկրետ փաստով: Պետք է նկատի ունենալ, որ վերոհիշյալ տեղեկությունից հետո հայկական աղբյուրներում պավլիկյանների մասին վկայություններ գտնում ենք միայն 150 տարի հետո, ուստի հեղինակը առավել ևս զգուշարար պետք է վարվեր այդ եղակի բառի հետ:

Երրորդ գլխում հեղինակը անցնում է պավլիկյան անվան ծագման հարցին, բերելով տարբեր տեսություններ: Հեղինակը մի տեղ հավանական է գտնում, որ պավլիկյան անվան ծագումը կապված է Պողոս հայի հետ (էջ 147), իսկ մի ուրիշ տեղում գրում է. «Դժվար է, իհարկե, որոշակիորեն պարզել, թե պավլիկյան անվան ծագման, նրա անվան առաջացման հարցը կապված է եղել Կալինիկեի որդի Պավղոսի՞, թե՞ մի այլ Պողոսի հետ, որը նույնպես ծագումով հայ էր և ուներ նույնանուն որդիներ, ինչ որ Կալինիկեի որդի Պողոսը» (էջ 146): Նախ և առաջ աղբյուրներում հիշատակվում է մի Պողոս՝ հայկական ծագումով, որը հանդես է եկել 8-րդ դարի սկզբին և ունեցել է Գեղնեսիոս և Թեոդորոս անուններով որդիներ, և մի Կալինիկեի որդի Պողոս Սամոսատցի, որն ապրել է 7-րդ դարի կեսերից առաջ և որի հայ լինելու և որդի ունենալու մասին աղբյուրները ոչինչ չեն հայտնում: Հեղինակը 143—144 էջերում մեջբերում է անում Պետրոս Սիկիլիացուց,[2] որտեղ ասված է, որ պավլիկյանները իրենց անունն ստացել են Պողոս սամոսատցուց՝ Կալինիկեի որդուց: Այնուհետև նա այդ հատվածի շարունակությունն է համարում մեկ ուրիշ տեղեկություն՝ ոմն Պողոս հայի մասին, որն ապրել է 8-րդ դարի սկզբում և ոչ մի կապ չունի Պողոս սամոսատցու՝ Կալինիկեի որդու հետ: Շփոթությունը առաջացել է հետևյալից: Պետրոս Սիկիլիացին գրում է. «Պողոս անունով մեկը, ծագումով հայ, ուներ երկու որդի, որոնց անուններն էին Գեղնեսիոս և Թեոդորոս, որոնց հետ նա փախչում և գալիս Եպիսպարիս, որի (Եպիսպարիսի) մասին նախապես մանրամասն ասվել է, երբ խոսում էինք Կալինիկեի որդիների՝ Սամոսատցի Պողոսի և Հովհաննեսի մասին, որ այդ Պողոսից էլ մանիքեցիների փոխարեն կոչվեցին պավլիկյաններ»[3]:

Մեր կողմից ընդգծված մասը հեղինակը դուրս է գցել որպես ավելորդ և բազմակետ դրել: Պարզ է, որ այդպիսով վերջին նախադասությունը բխեցվում է առաջինից և ոչ թե մեր կողմից ընդգծված նախադասությունից, ինչպես ընդգրում է: Դրանից էլ, իհարկե, Կալինիկեի որդի Պողոս Սամոսատցին հայտնում է, դառնում է երկու դավակների հայր, իսկ նրա կարծեցյալ որդիների անունները հար և նման են դառնում 8-րդ դարի Պողոս հայի որդիների անունների հետ:

Այնուհետև հեղինակը շարադրում է պավլիկյանների պատմությունը 7 և 8-րդ դարում: Եթե 7-րդ դարի պատմությունը շարադրում է ըստ Կեդրենոսի և Պետրոս Սիկիլիացու, ապա 8-րդ դարի համար որպես աղբյուր նրան ծառայում է միայն Բարոնիոսը: Թե ինչու է նա դիմում Բարոնիոսին և ոչ դեպքերին ավելի մոտիկ հեղինակներին, հայտնի չէ:

Այստեղ պետք է պարզել մի սկզբունքային հարց: Հեղինակը չի նկատում, որ Իսավրացի կայսրների օրոք պավլիկյան շարժումը նոր բնույթ է ստանում: Լևոն 3-րդ և հատկապես Կոնստանդին 5-րդ կայսրները, ձգտելով չեզոքացնել պավլիկյաններին և անդամ օգտագործել նրանց՝ վանականների դեմ մղած իրենց պայքարում, միանգամայն փոխում են իրենց վերաբերմունքը «հերձվածողների» հանդեպ: Իսավրացիները հովանավորում են պավլիկյաններին և վերջիններս դադարեցնում են իրենց ակտիվ պայքարը:

•

---

[1] Յովհաննու իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 39:

[2] *Petri Siculi*, Col. 1273.

[3] *Petri Siculi*, Col. 1281--1284, թարգմանության մեջ աշխատել ենք հնարավորին ափով պահպանել բնագրի ոճը և կառուցվածքը:

Այդ հարցը սպասիչ կերպով լուսաբանված է Ս. Լիպշիցի վերև հիշված հոդվածում։ Պավլիկյանները իբրև ռազմական ուժ օգտագործվում են արաբների դեմ մղվող պատերազմում և այդ է պատճառներից մեկը, որ պավլիկյան համայնքների դրությունը արաբների կողմից գրավված վայրերում դառնում է սպառնալի։

Պավլիկյանների հարաբերությունները Կոնստանդին 5-րդ կայսրի հետ այնքան սերտ էին, որ վերջինս Գեորգիոս վանականի կողմից կոչվում է ոչ թե քրիստոնյա, այլ պավլիկյան[2]։

Այդ «խաղաղ» շրջանը տևում է մինչև Նիկեփորոս I կայսրի մահը և Միքայել I-ի գահ բարձրանալը (811 թ.)։ Նիկեփորոսի մասին Թեոփանեսը հայտնում է, որ նա պավլիկյանների ջերմ բարեկամ էր[3]։ Իսկ Ստ. Մելիք-Բախշյանը, առանց որևէ հիմք ունենալու գրում է, որ իբր, 8-րդ դարի կեսերից սկսած, Իյուղանդիան կատաղի պայքար է մղում պավլիկյանների դեմ (էջ 171)։ Այս բոլորից պարզ է, որ պատմական իրական պատկերը ստանում է միանգամայն սխալ լուսաբանում։ Հեղինակը պարզապես այս հարցում մնում է 18-րդ դարի անգլիացի պատմաբան Էդվարդ Գիբբոնի սխալ տեսակետի վրա։

Այժմ մի այլ հարց։

Պավլիկյան շարժման ամենանշանավոր պարագլուխն էր Սերգիոսը։ Նա անցավ շարժման գլուխը 801 թվականին և 34 տարի անընդհատ մնաց շարժման ղեկավար։ Ոչիշտ է Պետրոս Սիկիլիացին գրում է, որ նա սպանվեց աշխարհի արարչագործության 6303 թվականին, այն է մեր թվականության 795 թ., սակայն դա պարզապես սխալ է, որովհետև հակասում է հենց Պետրոս Սիկիլիացու բերած փաստերին։ Նա մի այլ տեղում գրում է, որ Սերգիոսը շարժման գլուխ մնաց 34 տարի՝ կայսրուհի Իրինայի ժամանակվանից (797—802) մինչև Թեոփիլոս կայսեր ժամանակ (829—842)[4]։ Փոտի մոտ համապատասխան տեղում ասված է, որ Սերգիոսը սպանվեց աշխարհի արարչագործության 6313 թվականին (835 թ.) և ոչ թե 6303 (795 թ.) թվականին[5]։ Ակնհայտ է, որ Պետրոս Սիկիլիացին, ավելի ճիշտ նրա պատմության ընդօրինակողներից մեկը, այստեղ սխալ է գործել՝ 6313-ը դարձնելով 6303։ Սերգիոսը անշուշտ պավլիկյաններին գլխավորել է 801-ից 835 թվականը։ Սերգիոսի գործունեության ճիշտ ժամանակը տալիս է նաև Ստ. Մելիք-Բախշյանի կողմից հաճախ վկայակոչված կրոնագետ Զելցերը[6]։ Հեղինակը, սակայն, գտնում է, որ «Սերգիոսի մահվան թվականը ևս հայտնի չէ» (էջ 173) և որ Սերգիոսի գործունեությունը շարունակվեց ընդհուպ մինչև 9-րդ դարի սկզբները (էջ 169), երբ փաստորեն 9-րդ դարի սկզբում սկսվում է նրա գործունեությունը։ Սերգիոսի գործունեության ժամանակը ճշտելը կարևոր է այն տեսակետից, որ նրա ժամանակ է, որ պավլիկյան շարժումը վեր է ածվում զինված ապստամբության։

Այնուհետև հեղինակը շարադրում է պավլիկյանների 9-րդ դարի պատմությունը։ Այստեղ ևս նրա շարադրությունը զերծ չէ սխալներից։ Օրինակ, մեզ հայտնի է, որ Բարսեղ 1-ին կայսրը պավլիկյանների դեմ կազմակերպել է երեք արշավանք, ըստ որում առաջին երկուսը անհաջող են անցել, իսկ երրորդի ժամանակ պարտվել են պավլիկյանները, իսկ նրանց ղեկավար Խրիսոքիրը ընկնում է պատերազմի դաշտում։ Պարտությունը այնքան մեծ հարված հասցրեց ապստամբներին, որ նրանք այլևս գլուխ չբարձրացրին։ Պավլիկյանների վերջնական պարտությունը տեղի է ունեցել 872 թվականին։ Այդ տարե-

---

[1] *Е. Э. Липшиц.* Павликианское движение в Византии в VIII и первой половине IX века, Виз. Вр. V, 1952.

[2] *Georgii Monachi*, Chronicon, p. 751.

[3] *Theoph.*, p. 488.

[4] *Petri Siculi*, Col. 1293.

[5] *Photii*, Contra Manichaeos, Col. 80.

[6] *И. В. Чельцов*, О павликианах, Христианское чтение, СПБ. 1877, № 3—4 стр. 503, sur. 1.

[7] Բարսեղ I-ն իր արշավանքի ժամանակ խայտառակ պարտություն է կրում, պարտությունից հետո գնում է եկեղեցի և լալով աղոթում ու աստծուց խնդրում, որ իրեն հաղթանակ տա։ Իսկ Ստ. Մելիք-Բախշյանը գրում է, որ Խրիսոքիրը «գրեթե պարտվեց» (էջ 189), իսկ բյուզանդական բանակում բռնկված համաճարակի մասին (նույն տեղում) սկզբնաղբյուրներում ոչ մի տեղեկություն չի պահպանվել։

թիվը ընդունված է գիտության մեջ[1] և եթե հեղինակը այլ տեսակետ ունի, ապա նա պարտավոր էր հերքել իր նախորդներին և նոր փաստերով ապացուցեր իր թեզը։ 191-րդ էջում, սակայն, առանց որևէ հիմքի, հեղինակը գրում է, որ 873 թ. Խրիսոքիրը դեռևս կենդանի, զորքով ներխուժում է Փոքր Ասիա։ Խրիսոքիրի պարտությունը, ըստ Ս. Մելիք-Բախշյանի, պետք է որ տեղի ունեցած լիներ 873 թվականի աշնան և 874 թվականի ձմռան ամիսներին (էջ 194)։

Պավլիկյան շարժումը 9-րդ դարում ստանում է չտեսնված մեծ թափ։ 843 թվականին պատկերապաշտությունը վերականգնելուց հետո կայսրուհի Թեոդորայի հրամանով մահապատժի են ենթարկվում 100,000 պավլիկյաններ[2]։ Այս ջարդը չկասեցրեց շարժումը։ Որքան էլ չափազանցված համարենք թվական այդ տվյալը, այնուամենայնիվ, այն ճշգրիտ կերպով ցույց է տալիս շարժման մեծ ծավալը։ 9-րդ դարից է, որ պավլիկյան շարժումը վեր է ածվում ապստամբության՝ կայսրության դեմ։ Պավլիկյանների պայքարը համընկնում է Թովմա Սլավոնի ժողովրդական ապստամբության հետ (821—824), ըստ որում մենք ունենք կոնկրետ տեղեկություններ այն մասին, որ պավլիկյանները կռվում էին Թովմայի դրոշի ներքո[3]։ Այդ ժամանակ Հունաստանի և Մակեդոնիայի սլավոնների ապրստամբությունները, դուրս գալով տեղական շարժումների սահմաններից, միաձուլվում էին ընդհանուր ժողովրդական պայքարի հետ։ Այդ հուժկու դյուղացիական շարժումները, անշուշտ, արդյունք էին սոցիալ-տնտեսական հարաբերությունների բնապավառում առաջացած նոր երևույթների։ Նշված ժամանակաշրջանը բնորոշ էր Բյուզանդիայի պատմության համար որպես ֆեոդալականացման պրոցեսի խորացման ժամանակաշրջան։ Պավլիկյան շարժման հիմնական շարժիչ ուժը ազատ համայնական գյուղացիությունն էր։ 9-րդ դարից համայնքները սկսում են արագ կերպով կորցնել իրենց ազատությունը։ Այդ էր պատճառը, որ առաջ բերեց այդպիսի մեծ դասակարգային պառակտում։ Դեռևս լիովին չբայբայված համայնական կապերը պայմանավորեցին այն համառությունը, որը բնորոշ է 9-րդ դարի շարժումների համար։

Հեղինակը ամբողջ շարժումը առհասարակ, սկսած, համենայն դեպս, 7-րդ դարից, նկարագրում է իբրև մի շարժում, որը միայն և միմիայն քանակական փոփոխություններ է կրել։ Այդ է պատճառը, որ նա չի կարողացել բացահայտել 9-րդ դարում պավլիկյան շարժման մեջ տեղի ունեցած որակական փոփոխությունները։

9-րդ դարի ռազմական պարտությունը նշանակում էր փաստորեն պավլիկյան բարձման վախճանը և այն վկայությունները, որոնք 191-րդ և հաջորդ էջերում բերում է հեղինակը՝ հակառակ ենթադրության հիմք չեն կարող ծառայել։ Հետագա շրջանում, 9-րդ դարում կրած պարտությունից հետո, պավլիկյանությունը արագ կերպով վերածվեց սովորական աղանդի։ Պավլիկյանները մի քանի դար ևս խոստովանում էին իրենց հավատը, բայց նրանք արդեն ոչ թե մարտիկներ էին, որոնք պայքարում էին հանուն սոցիալական հավասարության, այլ սոսկ աղանդավորներ էին՝ բառիս բուն իմաստով։

Այստեղ տեղին է ասել, որ հեղինակը ստվերի մեջ է դցել պավլիկյան շարժման կարևորագույն պրոբլեմներից մեկը, այն է՝ շարժման մեջ տարբեր հոսանքների գոյությունը, որի մասին աղբյուրներում կան արժեքավոր տեղեկություններ։ Աշխատության մեջ մի նախադասություն է միայն նվիրված երկու հոսանքների առկայության մասին, 8-րդ դարում, իսկ հիմնական՝ երկու խոշոր հոսանքների առաջացումը 9-րդ դարում՝ անտեսված է բոլորովին։ Դրա պատճառն այն է, որ հեղինակը աշխատությունը գրել է հիմնականում Բարոնիոսի ոչ վստահելի տվյալների հիման վրա, որտեղ ժամանակագրական խառնաշփոթության հետևանքով պավլիկյանների ղեկավար Սերգիոսը ներկայացված է որպես հաջորդ՝ աղանդապետ Վահանին։ Իրականում այս երկու խոշոր գործիչները հանդես են եկել միաժամանակ և նրանց հետևորդների միջև տեղի է ունեցել սուր պայքար, մինչև որ, ըստ Պետրոս Սիկիլիացու, Սերգիոսը «աղանդը երկուսի բաժանեց»[4]։ Ամենայն իրավամբ կարելի է ենթադրել, որ Սերգիոսի գլխավորած հոսանքը ավելի պրոգրեսիվ ձգտումների արտահայտությունն էր։

[1] *А. А. Васильев*, Византия и арабы, политические отношения Византии и арабов за время Македонской династии, СПБ, 1902, стр. 30, прим. 1, стр. 31, прим. 1, М. Левченко, История Византии, 1940, стр. 138.

[2] *Theoph.*, Cont. ed. Bonn, p. 165, *դրախոսվող գիրք, էջ 175։*

[3] *Տես Е. Э. Липшиц, հիշ. աշխ., էջ 58։*

[4] *Petri Siculi*, Col. 1300.

Գրքի վերջին՝ 5-րդ գլուխը նվիրված է պավլիկյան շարժման դաղափարախոսությանը։ Պավլիկյանների դաղափարախոսությունը նախ և առաջ մեդ հետաքրքրում է այն տեսակետից, թե ինչպես է այն արտահայտել պավլիկյանության սոցիալական էությունը։ Հետևենք հեղինակի շարադրությանը։

Ըստ աղբյուրների, դրում է հեղինակը, պավլիկյանները լինելության հիմքում դնում էին երկու սկզբունքներ՝ բարի և չար աստվածությունները (էջ 209)։ Այնուհետև հեղինակը բերում է տեղեկություններ, որոնք համոզիչ կերպով ցույց են տալիս պավլիկյանների դուալիդմը։ Նրանք ասում էին, որ «մեր և հռոմայեցիների միջև եղած միակ տարբերությունն (այն է), որ մենք մեկ աստված ենք համարում երկնային հորը, որը այս աշխարհում իշխանություն չունի, այլ (կունենա այն) ապագայում, իսկ մյուս աստված՝ աշխարհի արարիչն, որին է պատկանում այս աշխարհի իշխանությունը»[1]։

Սակայն հեղինակը համաձայն չէ այդ ճիշտ կարծիքի հետ։ Նա դրում է. «Երբ հայագիտության մեջ առիթ են ունեցել խոսելու պավլիկյանների դաղափարախոսության մասին, ուսումնասիրողները, հետևելով սկզբնաղբյուրներին, միաբերան կրկնել են, որ պավլիկյան դաղափարախոսությունը դուալիստական է» (էջ 212)։ Հեղինակը շարունակում է. «Պավլիկյանների պայքարի պատմության և նրանց մասին եղած սկզբնաղբյուրների ուշիմ ու մանրակրկիտ ուսումնասիրությունը մեդ իրավունք է տալիս կասկածելու այդ տրադիցիոն թեզի վրա» (նույն տեղում) և որ «պավլիկյանները մոտենում էին մոնիզմին» (էջ 212)։ Ռուսերեն ամփոփման մեջ նա ավելի հստակ է արտահայտում իր միտքը։ Նա այնտեղ դրում է. „Первоисточники считали павликиан дуалистами, на самом же деле они были монистами" (էջ 243)։

Բայց նույն ամփոփման մեջ, մի այլ տեղ հեղինակը դրում է բոլորովին այլ բան, թե „Павликиане, несомненно, носили влияние манихеян (дуализм, общий для обоих)" (էջ 240)։

Ինչպես տեսնում ենք, հեղինակի մոտ այս հիմնական հարցը մնում է անորոշ։

Պավլիկյանները ձգտում էին վերադառնալ առաջին դարերի քրիստոնեությանը, երբ, ըստ ավանդության, տիրում էր ընդհանուր հավասարություն։ Այդ է պատճառը, որ պավլիկյաններն իրենց «քրիստոնյա» էին համարում, դանելով, որ իրենց հակառակորդները ուրացել են բուն քրիստոնեությունը։ Սկզբնական քրիստոնեության նկարագրությունը նրանք դտնում էին նախ և առաջ Պողոս առաքյալի թղթերում և այդ պատճառով էլ այդպիսի մեծ հարդանք էին տածում հանդեպ Պողոսի անձնավորությունը։ Այդ իսկ պատճառով, իրենց դեկավարները, ընդունելով Պողոս առաքյալի աշակերտների անունները, դառնում էին Տյուքիկոսներ և Տիտոսներ, իսկ վերջիններիս հիմնած «եկեղեցիները» կոչվում էին այնպես, ինչպես և կոչված էին, ըստ ավանդության, Պողոսի աշակերտների կողմից հիմնադրված եկեղեցիները՝ «Աքայա», «Լաոդիկիա» և այլն։

Ամենայն իրավամբ կարելի է պավլիկյանների նկատմամբ կիրառելի համարել Ֆ. Էնդելսի այն միտքը, որ նա, այլ կապակցությամբ արտահայտել է «Գյուղացիական պատերազմը Գերմանիայում» աշխատության մեջ։ Ըստ այդմ նրանք պահանջում էին «վերականդնումը այն հավասարության, որը գոյություն ուներ վաղ քրիստոնեական համայնքների անդամների հարաբերություններում և այդ հավասարության ընդունումը որպես նորմա նաև քաղաքացիական կյանքի համար»[2]։

Միայն պավլիկյանների ձգտումներով՝ կապել իդեալական համայնական հարաբերություններ, կարելի է բացատրել այն փաստը, որ ազանդավորների մի մասը χοινωνικοί — համայնականներ՝ անունն էր կրում։ Նման եզրակացություններ անելու համար աղբյուրներում կարելի է դտնել հստակ փաստեր։

Վերջացնելով մեր դրախոսականը, կանդ առնենք նաև մի այլ թերության վրա, այն է՝ դրախոսվող գրքի դիտական ապարատի վրա։

Ծանոթություններում մենք հաճախ չենք դտնում այս կամ այն գրքի դիտական վկայակոչությունը։

Այդպես, օրինակ, բուն տեքստում գրված է, որ «Դենեսիոսի աշխատությունը հրատարակվել է Բոնում, 1831 թվականին» (էջ 20)։ Նույնը կարելի է ասել Նիկետաս Խոնիատեսի և Բարոնիոսի վկայակոչման մասին (էջ 22), փոխանակ այդ բոլորը տալու ծա-

[1] *Petri Siculi*, Col. 1254.

[2] *Маркс — Энгельс* Сочинения, т. VIII, стр. 130.

նոթության մեջ, ինչպես ընդունված է։ Հեղինակը մի քանի անգամ վկայակոչում է ձեռագրեր (էջ 55, 56, 220 և այլն), բայց չի ծանոթացնում ընթերցողին այդ ձեռագրերի բովանդակության հետ։

Ձեռագրերի մի մասը, հայտնում է հեղինակը, հրատարակվել է Միարանի կողմից[1]։ Սակայն ինչու է, այնուամենայնիվ, հեղինակը վկայակոչում ձեռագիրը, պարզ չէ։ Եթե ձեռագրի հրատարակությունը բավարար չէ, ապա այդ պետք էր, իհարկե, նշել։

Հեղինակը ասում է, թե Նիկետաս Խոնիատեսի «Պատմությունը» հրատարակվել է ռուսերեն 2 անգամ՝ մեկը 1835 թվականին Վ. Ի. Դոլոցկու և 1862 թվականին Ն. Վ. Զելցովի կողմից (էջ 22), իսկ իրականում այդ գործը թարգմանվել է մի անգամ, ընդ որում առաջին հատորը թարգմանել է Դոլոցկին, իսկ երկրորդը՝ Զելցովը։

Ս. Մելիք-Բախշյանը բուն տեքստում տալիս է շատ աղբյուրների լատիներեն վերնագրեր, օրինակ, գրում է Պետրոս Սիկիլիացու „Historia Manichaeorum seu Pauliciano-rum" աշխատության մասին, մինչդեռ այդ վերնագիրը տվել է այդ գործի հրատարակիչը և նա շատ հեռու է բուն վերնագրից։

Մի շարք աշխատություններ հեղինակը սխալ է վկայակոչում։ Օրինակ, նա հայտնում է, որ պավլիկյանների մասին "Real-Encuklopadie fur protestantische Theologie und Kirche" հանրագիտարանում տպված է Հերցոգի հոդվածը (էջ 27), մինչդեռ Հերցոգը ամբողջ հանրագիտարանի հրատարակիչ-խմբագիրն է, իսկ հոդվածի հեղինակը՝ Շմիդտն է (ինչպես ճիշտ ասված է գրականության ցանկում)։

Արտաշես Կարինյանն ունի «Սոցիալական պայքարի արձագանքներ հին հայ գրականության մեջ» վերնագրով հոդված, հրատարակված 1946 թ. Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի «Գրական բանասիրական հետազոտությունների» Ա. գրքում։ 154 էջում և գրականության ցուցակում տրված տեղեկությունների մեջ (ուր հիշված է միայն հոդվածի վերնագիրը և հեղինակի անունը) անհնարին է գտնել այդ աշխատության հրատարակության տեղը։

198–199 էջերում հեղինակը բերում է բյուզանդագետ Բենեշևիչի մի կարծիքը և վկայակոչում իր աղբյուրը այսպես՝ Бенешевич, Очерки по истории Византии, выпуск I, СПБ, 1912, стр. 95–96. Սակայն Բենեշևիչը կարծիք չի կարող հայտնած լինել, որովհետև նա միայն վկայակոչված «Ակնարկների» խմբագիրն է, իսկ նշված առաջին պրակում զետեղված է Գելցերի «Բյուզանդիոյի քաղաքական պատմության ակնարկի» ռուսերեն թարգմանությունը, այն գործը, որի հայերեն թարգմանությունը[2] հեղինակը վկայակոչում է մի այլ տեղում։

Արմենիայի թեմ գոյություն չի ունեցել, ինչպես գրում է հեղինակը (էջ 192)։ Եղել է Արմենիակոն թեմ և դա զուտ հայկական թեմ չէ, ինչպես պատկերացնում է նա և անում ոչնչով չհիմնավորված եզրակացություններ։

Բյուզանդական գահի վրա 842–867 թվականներին նստած էր ոչ թե Միքայել II-ը (էջ 242), այլ Միքայել III-ը, ինչպես ճիշտ ցույց է տրված բուն տեքստում։

Պավլիկյանների բռնագաղթեցում Թեսալիա (էջ 243) երբեք էլ չի եղել, այլ եղել է Թրակիա։

Աշխատության 36-րդ էջում հեղինակը գրում է, որ Մանին հունական աղբյուրներում հիշատակվում է Μάνης (Մանես) ձևով, իսկ լատիներենում Manicheos: Manicheos նշանակում է մանիքեցի, իսկ իրեն Մանիին լատինական աղբյուրները անվանվում են նույնպես Մանես։

Արաբական պատմիչ Տաբարին մի ճակատամարտի մասին խոսելիս տալիս է նրա թվականը Հիջրայի տոմարով՝ 246 թվականը։ Ա. Վասիլևը իր գրքում[3] ցույց է տալիս, որ Հիջրայի այդ թիվը համապատասխանում է մեր թվարկության 860 թվականի մարտի 28-ից մինչև 861 թվականի մարտի 16-ը, այսինքն՝ շատ պարզ տալիս է մի լուսնային տարի։ Իսկ Ստ. Մելիք-Բախշյանը գրում է, որ «այդ կռիվները պարբերաբար տևել են 860 թվականի մարտի 28-ից մինչև 861 թվականի մարտի 16-ը» (?!) (էջ 181)։ Այսինքն, նույն

[1] Գ. Տեր-Մկրտչյան, Դիրք հերձուածոց, Վաղարշապատ, 1892։

[2] Հ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, Վաղարշապատ, 1901։

[3] *А. Васильев*, Византия и арабы, политические отношения Византии и арабов за время Аморийской династии, СПБ, 1900, приложение, стр. 56.

բաներ կլիներ, եթե մեզ տրված լիներ մ. թ. 860 թվականը և մենք դրանից եզրակացնեինք, որ ճակատամարտը տեղի է ունեցել հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը։

Լատիներեն տեքստերը միշտ չէ, որ ճիշտ են թարգմանված։ Օրինակ, Mananalim Manichaeorum metropolim թարգմանվել է մանիքեականների... (բազմակեսերն հեղինակինն են) Մանանալի շրջակայքը» (էջ 164)։ Մինչդեռ այդ նշանակում է «Մանիքեցիների մայրաքաղաք Մանանալ»-ի հայցական հոլովը։

Քրիստոսին վերագրվող հայտնի այն դարձվածքը «ես եմ կենսատու ջուրը» (ըստ Հովհաննես. Դ. 10), թարգմանվել է «ես ջուր եմ գինու հետ խառնված» (էջ 222)։ Հեղինակը սխալմամբ փոխանակ Ego sum aqua vivens, արտագրել է vinens (անիմաստ բառ) և տվել իր տարօրինակ թարգմանությունը։

Գրքում չի կիրառված գիտական տառադարձություն (տրանսկրիպցիա) օտար անունները հայերենի վերածելու ժամանակ։ Անունները արտահայտվում են կամ սուսերեն, կամ լատիներեն, կամ հայերեն ձևերով։ Պետք էր մինչև վերջ ընդունել հայկական տրանսկրիպցիան։ Հայերը երբեք չեն ասում Սերգեյ, Սերգիուս, Տիխիկ, Տիտ, Կեդրենուս, Արգիր, Դուկ, Մելիսեն, այլ՝ Սերգիոս, Տյուքիկոս, Տիտոս, Կեդրենոս, Արգիրոս, Դուկաս, Մելիսենոս։

Բազմաթիվ անուններ և տերմիններ խեղաթյուրված են։ Օրինակ, փոխանակ Տերերինթոս՝ Տիրերինեթ (էջ 38), փոխանակ Կրիկորաքես՝ Կրիխորաքես (էջ 167), փոխանակ պրոտոսպաթար՝ պրոտոսպարթար (էջ 17), փոխանակ Խորտոկոպիոն՝ Եսորտոկոպիում (էջ 168), փոխանակ Պարակոնդակես՝ Պարակոնդաս (էջ 172) և այլն։ Այսպիսի օրինակներ կարելի է շատ բերել։

Ամփոփելով մեր դիտողությունները, պետք է հանգենք հետևյալ եզրակացության. դրախոսվող աշխատությունը կոչված է լուսաբանելու հայ ժողովրդի պատմության մեջ ուրույն տեղ գրավող պավլիկյանների հուժկու սոցիալական շարժման ծագումը, ընթացքը և դադափարախոսությունը։ Սակայն, հեղինակը, քննադատական վերաբերմունք չցուցաբերելով ակզբնաղբյուրների նկատմամբ, պատշաճ կերպով չօգտագործելով հարցի շուրջը գրված մարքսիստական աշխատությունները, հրապարակի վրա է դրել մի աշխատություն, որը չի բավարարում գիտական տարրական պահանջները, գրված է տեսական և փաստական ցածր մակարդակի վրա։

Կ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ
Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ